ՇԱԲԱԹ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1906 — ԹԻՒ 851

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թերթիս խմբագրապետի բացակայութեան, ինչպէս եւ քանի մը ընկերներու Վառնայէն բոլորովին հեռացած ըլլալու պատճառով ՇԱՐԺՈՒՄ ամսու մը չափ շաբաթ մի անգամ պիտի հրատարակուի ։ Նոյեմբերի մէջ «Շարժում» կսկսի կրկին իր կանոնաւոր հրատարակումը ։

### ՄԻ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսի պատուիրակ Տաճատ վարդապետի մասին «առաջնորդական խնդրին» անցեալ համարում կցած յետ գրութեան մէջ մի կարեւոր սխալ սպրդել է Թիւրիմացութեան պատճառով ։ Տաճատ վարդապետ դիւանապետ չէ եղած միայն առաջին կոնդակի միջոցին իսկ վերջին երկու կոնդակների միջոցին եղած է այսինքն Հայրապետի հրամանները կատարող մի պաշտօնեայ, որը չէր կարող Կաթողիկոսին տուն տալ այս ինչ կամ այն ինչ կոնդակը լոյս հանելու ։

ՎԱՐԴՕ

### ՄԵՐ ՉԸ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը խնդրենք չտապել բաժնեգինները հասցնել խմբագրութեանս մինչեւ տարւոյն վերջը ; կամ յայտարարել որ թերթը ծրի կուզեք կարդալ ։

### «ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բըռոշիւրը յանձնուած է տպագրութեան։

Բրօշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսուած է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրօշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

—o—

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քաբափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Ու հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

## ՅԱՐԱԿԱՆ ՍԻՋՈՑՆԵՐ

«Ռազմիկի» մէջ կարդում ենք հետեւեալ յայտարարութիւնը.

«Հ. յ. Դ. Ֆիլիպէի կոմիտէին տեղեկագրին ու որոշման, ինչպէս եւ Պալք. շրջանի «ներքին կանոնագրին» տրամադրութեանց համաձայն՝ Կոմիտէի» կազմակերպական շարքերէն վտարուած կը յայտարարէ Աստիկ Իպօեանը՝ որ ասկէ առաջ ընկերական դատաստանի մը վճռով իբրեւ յանցաւոր պատժուելէ ետք՝ դիմած է կազմակերպութեան և ընկերներու հանդէպ հրապարակային գրպարտութեանց և գիտումնաւոր յերիւրանքներու, զանազան գիմակներու տակ»։

Մենք չը գիտենք թէ Աստիկ Իպօյեան ինչ յանցանքի համար է ընկերական դատաստանի ենթարկվել. բայց արդէն արտաքսման վճռագրի վերջին մասը ցոյց է տալիս որ Իպօյեանը Ֆիլիպէի ըմբոստներից է երեւում, այսինքն ամէն քմահաճոյքի չենթարկվողներից. իսկ կ. կոմիտէն այդպիսիներից ազատվելու համար դիմում է նախ «ճերմակ տեռորի»—ինչպէս անում է ցարի կառավարութիւնը—սարսափ տարածելու համար բոլոր Իպօյանանման անդամների վրայ։

Արդէն շաբաթներ կայ որ լըսում եմ թէ Վառնայի չենթարկվող անդամներին էլ այդպիսի մի սպառնալիք է եղել. այսինքն արտաքսման սպառնալիք. առաջին փորձը Աստիկի գլխին են կատարել, միւսներին սարսափեցնելու համար։

Յայտնի ճշմարտութիւն է թէ ինչ տհաճելի ճշմարիտ թերութիւն որ անում են Դաշնակցութեան պաշտօնական անդամների մասին, այդ ճշմարտութիւնները գրպարտութիւն է հռչակվում մեղադրվողների կողմից. Ասում են Դաշնակցութիւնը սկսել է եղբայրասպանութեամբ զբաղվել. այդ զրպարտութիւն է հռչակվում. ասում են թէ ձրիակերութիւնը լիովին թագաւորում է Դաշնակցութեան մէջ՝ այդ զըրպարտութիւն է համարվում. ասում են՝ Դաշնակցութեան փողերը վատնվում են յաճախ զուր տեղը այդ զրպարտութիւն է համարվում. ասում են Դաշնակցութիւնը այժմ մի քանի ոչ յեղափոխականների ձեռքում անձնական քմահաճոյքների գործիք է դարձել՝ այդ զրպարտութիւն է համարվում։ Մինչդեռ այդ զրպարտութիւն հռչակվածները դառն իրականութիւններ են և դաշնակցական կարեւոր անդամները խոստովանում են ճառելով և գըրելով. Թերեւս Աստիկ Իպօյեանն էլ այդ տեսակ զրպարտութիւններ անելու համար է արտաքսվում «կազմակերպական շարքերից»։ Անմիտ և ծիծաղելի մի ջոց. կատարեալ վայել ցարի նախարարներին, նահանգապետներին և գաւառապետներին. որոնք պետական փտումների իրական նմուշները մէջ տեղ բերած լինելու համար դատաստանի են ենթարկվում իբր զրպարտիչներ և դատապարտվում այլ և այլ պատիժների։

«Կնիքը ում մօտն է, նա Սուլէյման է» հիմա մեր դաշնակցական մարմինների գործն է. մարդիկը Սուլէյման են, ամէն յիմար սխոշման տակ կնիքը կոխում են և արատաւորում յեղափոխութեան անունը։

* * *

Պարիզում իմ ձեռքս անցաւ Դաշ. մի կոմիտէի կնիքով կնքված մի պաշտօնական թուղթ, որը բոլորովին սուտ հիմերի վրա մի որոշում էր յայտարարում ոչ ինձ, ի հարկէ։ Այդ թուղթը ես պահել եմ ինձ մօտ այդ կ. կոմիտէի սուտի վրա հիմնըված արարքը մէջ տեղ դնելու Դաշնակցութեան ընդհանուր ժողովում և առայժմ աւելորդ եմ համարում հրապարակ հանել։ Այդ այնպիսի մի խոշոր սուտի վրա հիմնված պաշտօնական թուղթ է և այնքան արատաւորիչ Դաշնակցութեան համար, որ մարդ զզւանք է զգում դէպի այդ կ. կոմիտէի անդամները որոնք իրենց ապուշութիւնով կազմակերպութիւնը դնում են ծաղրելի դրութեան մէջ և Դաշնակցութեան կնիքը գործածում ստեր վաւերացնելու համար. բայց ինչ անես. կազմակերպութիւնը այդ դրութեան է հասել. մի՞թէ ռուսական արդարադատութեան կնիքները ստեր չե՞ն վաւերացնում անմեղ մարդկանց, որոնք ներկայ կացութեան դէմ ըմբոստներ են, դատապարտելու համար։

ՎԱՐԴՕ

## ԱՐՏԱՔՍՈՒՄ

Կատարուեցաւ այն՝ ինչ որ իրերու ներկայ կացութեան բնական հետեւանքն էր։ Տեղիս մարմինը ամբողջ 6 ամիս ապարդիւն կերպով սպասելէ յետոյ որ թերեւս „մոլորեալ ոչխարը" կրկին կը վերադառնայ իր հօտին, երբ համոզուեցաւ թէ՝ անուշ տեղը կապելու հինցած քաղաքականութիւնը կորսնցուցած է այլեւս իր այժմէութիւնը եւ ուժը, վերջապէս իր տեղեկագիրը կը ներկայացնէ Կ. Կոմիտէին ու այս վերջինը պատճառաբանելով թէ՝ ես ասկէ առաջ ընկերական դատաստանի մը վճիռով իբր յանցաւոր պատժուելէ ետքը՝ կազմակերպութեան ու ըն-

